ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"22" մարտի 2024թ. N 29-Լ

ՀՐԱՄԱՆ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՊԱՀՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.2-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-ին կետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել շինարարական աղբի հավաքման, տեղափոխման, պահման և հեռացման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3/22/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք.Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2024 թվականի մարտի 22-ի N 24-Լ հրամանի

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՊԱՀՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն ընթացակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած աղբի հավաքման, տեղափոխման, պահման և հեռացման կանոնները:

2. Սույն ընթացակարգի ընդունումը բխում է շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի և առողջության պահպանման համար անվտանգ պայմանների ապահովման անհրաժեշտությունից:

3. Սույն ընթացակարգը պարտադիր են շինարարական աղբի հավաքման, տեղափոխման, պահման և հեռացման հետ առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սույնով սահմանվում են բնակելի, հասարակական և արտադրական շենքերի, շինությունների, ինժեներական հաղորդակցուղիների կառուցման, վերակառուցման, քանդման, հիմնանորոգման, ամրացման, ընթացիկ նորոգման, արդիականացման և այլ շինմոնտաժային աշխատանքների արդյունքում առաջացող շինարարության և քանդման աղբի (այսուհետ՝ շինարարական աղբ) անվտանգ գործածության ընթացակարգերը (այսուհետ՝ ընթացակարգեր)՝ մարդու առողջությունն ու շրջակա միջավայրի պահպանությունն ապահովելու նպատակով:

5. Սույն ընթացակարգի սահմանմամբ նախատեսվում է նախադրյալներ ստեղծել Հայաստանի Հանրապետության տարածքում շինարական աղբի կանոնակարգված

հավաքման, պահման, փոխադրման և հեռացման, ինչպես նաև հետագայում որպես երկրորդային ռեսուրս օգտագործման համար:

6. Սույն ընթացակարգերի ընդունման նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում շինարարական աղբի կուտակման, աղբավայրեր փոխադրվող աղբի քանակի նվազեցումը:

7. Մարդկանց և շրջակա միջավայրի համար վտանգավոր հատկություններ ունեցող և ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանով հաստատված վտանգավոր թափոնների ցանկում ներառված շինարարական աղբի գործածությամբ կարող են զբաղվել իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքային հիմնարկները, որոնք «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով ստացել են վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա և լիցենզիայի համապատասխան ներդիրներ:

8. Ասբեստ պարունակող շինարարական աղբի գործածության պարագայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հուլիսի 28-ի N246-Լ հրամանով հաստատված ուղեցույցով:

9. Շինարարական աշխատանքների ընթացքում հողագրունտի հանույթի պարագայում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» N 572-Ն որոշմամբ:

3. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՊԱՀՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

10. Շինարարական աղբի հավաքումն իրականացվում է տեսակավորված՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի:

11. Շինարարական աղբի առանձին հավաքումը պետք է գլխավորապես իրականացվի մեքենայացված եղանակով:

12. Առաջացող շինարարական աղբի մեխանիկական (ձեռքով) հավաքումը (տեսակավորումը) իրականացվում է առողջապահական (սանիտարական) և բնապահպանական օրենսդրության, սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահանջներին համապատասխան:

13. Շինարարական աղբի առաջացման օբյեկտներում շինարարական աղբը կուտակվում և ժամանակավոր պահվում է դրանց համար հատուկ նախատեսված փակ տարածքներում՝ մինչև դրանց պարբերաբար տեղափոխումը հետագա օգտագործման, վերամշակման, վնասազերծման կամ թաղման վայրեր:

14. Շինարարական աղբի պահման վայրերում (այսուհետ՝ Պահման վայրեր) նախատեսվում են ստացիոնար կամ շարժական բեռնման, դատարկման մեխանիզմներ և ընդունիչներ՝ շինարական աղբը առաջացման օբյեկտից դուրս բերելու նպատակով:

15. Շինարարական աղբը անմիջապես առաջացման օբյեկտում պահման դեպքում պետք է նախատեսված լինեն հատուկ նշանակության ստացիոնար պահեստներ, հարթակներ կամ կոնտեյներներ/բունկերներ:

16. Պահման վայրերը պետք է՝

1) տեղակայված լինեն շինարարական աղբի առաջացման օբյեկտի տարածքում կամ շինարարական աղբ առաջացնողի կողմից այդ նպատակով նախատեսված հարակից տարածքում կամ շինարարական աղբի վերամշակման, օգտագործման, վնասազերծման կամ տեղադրման (թաղման) համար նախատեսված օբյեկտի հարակից տարածքում,

2) պահման վայրերը տարածքի սահմանագծով պետք է լինեն պարսպապատված,

3) պահման վայրերը պետք է այնպես սարքավորված լինեն, որպեսզի բացառեն շինարարական աղբով հողի, ընդերքի, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտումը,

4) պահման վայրերում թափոնների պահումը պետք է իրականացվի առողջապահական (սանիտարական) և բնապահպանական օրենսդրության, սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահանջներին համապատասխան,

5) շինարարական աղբ առաջացնողը շինարարական աղբի հավաքման և ժամանակավոր պահման ամբողջ ընթացքում պահպանում է բնապահպանական, սանիտարական և հակահրդեհային նորմերը:

17. Շինարարական աղբը բաց հարթակներում ժամանակավոր պահելու դեպքում անհրաժեշտ է, որ՝

1) պահման վայրերը տեղակայված լինեն բնակելի հատվածի նկատմամբ գերիշխող քամիների հակառակ ուղղությամբ,

2) կուտակված շինարարական աղբի մակերևույթը պաշտպանված լինի մթնոլորտային տեղումների և քամիների ազդեցությունից,

3) հարթակները ունենան պինդ, անջրաթափանց և քիմիապես կայուն ծածկույթ (ասֆալտ, բետոն և այլն):

18. Տնտեսվարող սուբյեկտները, որոնց գործունեության ընթացքում գոյանում է շինարարական աղբ, պետք է վարեն դրանց գոյացման, պահման և տեղափոխման գրանցամատյան՝ ստորև ներկայացվող ձևաչափին համապատասխան:

Շինարարական աղբի ժամանակավոր պահման վայրերում գրանցամատյան

N	Շինարարականաղբի գոյացման ամսաթիվ	Շինարարական աղբի, տեսակ/անվանում	Ծավալ, $մ^3$	Տեղափոխման ամսաթիվ	Փոխադրողի անվանում	Փոխադրման վայր

19. Տնտեսվարող սուբյեկտները, որոնց գործունեության ընթացքում գոյանում է շինարարական աղբ, պատասխանատվություն են կրում սույն ընթացակարգերով սահմանված շինարարական աղբի հավաքման և ժամանակավոր պահման պահանջների կատարման նկատմամբ:

4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

20. Շինարարական աղբի փոխադրման աշխատաքներն իրականացվում են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ համապատասխան թույլտվությունների ձեռքբերման պարագայում:

21. Շինարարական աղբի փոխադրումը առաջացման օբյեկտներից և/կամ պահման վայրերից իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից, որոնց գործունեության ընթացքում գոյանում է շինարարական աղբ կամ աղբի փոխադրման գործունեություն

իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից՝ համապատասխան պայմանագրի կնքման դեպքում:

22. Շինարարական աղբի փոխադրման ժամանակ օգտագործվող ինքնաթափ ավտոտրանսպորտային միջոցները, ինչպես նաև առանց կափարիչի կոնտեյներները պետք է հագեցած լինեն փոշու համար անթափանց տենտային ծածկոցներով՝ փոխադրման ընթացքում աղբի տարածումը կանխելու նպատակով:

23. Շինարարական աղբի փոխադրումն առաջացման օբյեկտներից և/կամ պահման վայրերից պետք է իրականացվի առավել արդյունավետ երթուղիներով և համայնքի ավագանու կողմից հաստատված սխեմայով:

24. Շինարարական աղբ փոխադրողը պետք է պահպանի «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջները:

25. Փոխադրման վայրն ընտրվում և սխեմաները կազմվում են տնտեսվարող սուբյեկտի կողմից, որի գործունեության ընթացքում գոյանում է շինարարական աղբ:

26. Շինարարական աղբի փոխադրումն իրականցնող տնտեսվարող սուբյեկտը պարտավոր է՝

1) պահպանել բեռնափոխադրողներին ներկայացվող ընդհանուր պահանջները,

2) հստակորեն իրականացնել դեպի փոխադրման վայր տնտեսվարող սուբյեկտի ցուցումները, որի գործունեության ընթացքում գոյանում է շինարարական աղբ,

3) շինարարական աղբը վերամշակման, օգտահանման կամ տեղադրման օբյեկտում աղբն ընդունող տնտեսվարող սուբյեկտին հանձնելու իրողությունը փաստագրել և տվյալ տնտեսվարող սուբյեկտից ստանալ շինարարական աղբի ուղեկցող կտրոն,

4) երթուղու ավարտից անմիջապես հետո շինարարական աղբի ուղեկցող կտրոնը տրամադրել տնտեսվարող սուբյեկտին, որի գործունեության արդյունքում գոյանում է շինարարական աղբ:

27. Տնտեսվարող սուբյեկտը, որի գործունեության արդյունքում գոյանում է շինարարական աղբ, աղբը փոխադրող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ իրականացնում է հսկողություն՝

1) պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ,

2) շինարարական աղբն ընդունող տնտեսվարող սուբյեկտին փաստացի հանձնված շինարարական աղբի ծավալի հաշվառման նկատմամբ:

5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՕԳՏԱՀԱՆՈՒՄԸ

28. Երկրորդային ռեսուրս հանդիսացող շինարարական աղբը ենթակա է վերամշակման և հետագա օգտագործման՝ առողջապահական (սանիտարական) և բնապահպանական օրենսդրության, սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահանջներին համապատասխան:

29. Շինարարական աղբը, որի օգտագործումը առաջացման օբյեկտում նախատեսված է նախագծային փաստաթղթերով, պետք է բերվի օգտագործման համար կիրառելի վիճակի շինհրապարակում, արտադրամասերում կամ մասնագիտացված արտադրական ձեռնարկություններում:

30. Շինարարական աղբի վերամշակման համար համապատասխան հզորությունների (շենքեր, շինություններ, կայանքներ, սարքեր, սարքավորումներ և այլն) բացակայության դեպքում, շինարարական աղբը կարող է օգտագործվել բանեցված քարհանքները լցնելու, ինչպես նաև գործող աղբավայրերում աղբի շերտերի մեկուսացման համար:

31. Շինարարական աղբի վերամշակման և հետագա օգտագործման դեպքում շինարարական աղբի վերամշակման օբյեկտները և դրանց վերամշակման ժամանակ օգտագործվող արդյունաբերական կայանքները պետք է համապատասխանեն առողջապահական (սանիտարական) ու բնապահպանական օրենսդրության և սանիտարական կանոնների ու հիգիենիկ նորմատիվների պահանջներին:

32. Կառուցվածքային այն տարրերը, որոնք նպատակահարմար են հետագա օգտագործման համար, պետք է զերծ պահվեն վնասվելուց ապամոնտաժման ժամանակ:

33. Քարե շինությունների ապամոնտաժման դեպքում պետք է տեսակավորել փայտե և մետաղական բաղադրիչները հետագա օգտագործման համար:

34. Ճանապարհների, մայթերի, հրապարակների, ստորգետնյա կոմունալ ենթակառուցածքների ապամոնտաժման պարագայում անհրաժեշտ է հեռացնել հարակից տարածքների բուսածածկ հողը և հողի բերրի շերտը, որպեսզի բացառվի շինարարական

աղբով դրանց աղտոտումը, այնուհետև շինարարական աղբը տեղափոխվի հատուկ նշանակված պահեստային տարածքներ:

35. Ճանապարհների, մայթերի և հրապարակների ասֆալտբետոնե ծածկերի ապամոնտաժման ժամանակ գոյացած երկրորդային հումքը նպատակահարմար է վերաօգտագործել ճանապարհաշինության մեջ՝ ջերմային մշակումից հետո:

36. Բետոն, աղյուս և խիճ պարունակող շինարարական աղբը կարող է օգտագործվել ճանապարհների հիմքերի լցոնման համար:

37. Հիմնականում երկաթբետոն ներառող շինարարական աղբը պետք է տեսակավորվի հատուկ նշանակության սարքավորումների միջոցով:

38. Խոշոր կտորները մանրացվում են հիդրավլիկ մուրճերի և մկրատների միջոցով:

39. Շինարարական աղբը վերամշակման, օգտահանման նպատակով ընդունող տնտեսվարող սուբյեկտը պետք է հաստատի շինարարական աղբը փոխադրող տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած ուղեկցող կտրոնը՝ նշելով ընդունված աղբի քանակն ու անվանումը՝ հետագայում տնտեսվարող սուբյեկտին փոխանցելու նպատակով, որի գործունեության արդյունքում գոյանում է շինարարական աղբ: Ուղեկցող կտրոնի պատճենը մնում է շինարարական աղբն ընդունող տնտեսվարող սուբյեկտի մոտ, և համապատասխան տվյալները լրացվում են շինարարական աղբի ընդունման գրանցամատյանում:

40. Շինարարական աղբի օգտահանման գործունեությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է լիցենզավորման՝ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում ՀՀ պետական լիազոր մարմնի կողմից, իսկ ստացված երկրորդային արտադրանքը՝ հավաստագրման:

6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ

41. Հետագա օգտագործման համար ոչ պիտանի շինարական աղբի հեռացման համար նախատեսված օբյեկտները պետք բավարարեն բնապահպանական պահանջներին:

42. Շինարարական աղբի հեռացման օբյեկտները շահագործող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պետք է ունենան համապատասխան թույլտվություն աղբի տեղադրման համար:

43. Արգելվում է շինարարական աղբի հեռացումը այն օբյեկտներում, որոնք շահագործվում են համապատասխան թույլտվություններ չունեցող իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի կողմից, և չեն համապատասխանում բնապահպանական պահանջներին:

44. Շինարարական աղբի հեռացման օբյեկտը շահագործող անձը պետք է հաստատի շինարարական աղբը փոխադրող տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած ուղեկցող կտրոնը՝ նշելով ընդունված աղբի քանակն ու անվանումը՝ հետագայում տնտեսվարող սուբյեկտին փոխանցելու նպատակով, որի գործունեության արդյունքում գոյանում է շինարարական աղբ: Ուղեկցող կտրոնի պատճենը մնում է շինարարական աղբի հեռացման օբյեկտը շահագործող անձանց մոտ, և համապատասխան տվյալները լրացվում են շինարարական աղբի հեռացման համար ընդունման գրանցամատյանում: